

ՀԵՐԹԿԱՆ ԱՏՈՆԵՍԱՎՈՐՄԱՆ ՆԹԱԿԱ ՖԻԶԻԿԱՅԻ ՈՒՍՈՒՑԻԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏԱՆ ԴԱՍԸՆՏԱՑ 2022ԹԹ

ԹԵՄԱ՝

Փոքր խմբերով աշխատանքի առավելություններն ու սահմանափակումները
ֆիզիկաի ուսուցման գործընթացում

Դպրոց՝ Մրգաշատի Մ. Մաղաքյանի անվան թիվ 2

Առարկա՝ ֆիզիկա

Վերապատրաստվող ուսուցչուհի՝ Աստրյն Թ.

Վերապատրաստող ուսուցչուհի՝ Վարդանյան Ն.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն	3էջ
2.Գրական ակնարկ	4էջ
3. Գործնական հմտություն	7էջ
4. Ամփոփում	11էջ
5.Գրաատյան ցանկ	13էջ

Ներածություն

Վատ ուսցիչը դասավանդում է
փաստերով, իսկ լավը՝ սովորեցնում է
փնտրել և գտնել:

Ա. Դիտերվեզ

Դպրոցում ուսուցչի աշխատանքի և աշակերտների ուսումնական
հաջողությունների արդյունքը չափվում են ձեռք բերված գիտելիքներով,
կարողություններով և հմտություններով:


<<Պատմիր ինձ, և կհիշեմ, բացատրիր ինձ

և կհասկանամ, ներգրավվի ինձ, և կսովորեմ>>

Աշակերտները որպես կանոն հիմնականում զբաղված են ֆուտբոլային
հանդիպումներով, սերիալներ դիտելով ու տարատեսակ խաղերով: Նաև
աշակերտներին զբաղեցնում են սոցիալական ցանցերը: Մի խոսքով սովորելու
ժամանակ շատ քիչ է մնում: Դասարանի երեխաները՝ հիմնականում տղաները
անտարբեր են սովորելու հանդեպ: Որպեսզի սովորելու գործընթացը կազմակերպվի
արդյունավետ և բացահայտվեն սովորողների կրթական կարիքները՝ կիրառել
տարբերակված, ինտերակտիվ ուսուցման եղանակով ուսուցում՝ հետաքրքիր և
մասնակից դարձնելով աշակերտներին, որը միայն ավանդական ուսուցման մեթոդով
չի հաջողվում: Աշխատանքային գործունեության ընթացքում հանդիպում ենք շատ
խնդիրների՝ աշակերտների ներգրավածության, մոտիվացիայի, բանավոր խոսքի,
հիշողության, ուշադրության և այլ խնդիրների: Որպեսզի սովորողը կարողանա
հաղթահարի այս և մի շարք այլ խնդիրներ՝ ուսուցչի խնդիրն է դասապրոցեսը
կազմակերպի այնպես, որ աշակերտին լինի հետաքրքիր: Ֆիզիկայի դասերը
հետաքրքիր ու հասկանալի անցկացնելը, ինչպես նաև կրթական կարիքների
բացահայտելը, որի հետևանքով աշակերտը կսկսի ինտեգրվել և լավ սովորել՝ պետք
է ակտիվ մասնակցի ուսուցման գործընթացին, որը լավ կազմակերպվում է փոքր
խմբերով աշխատելիս:

Գրականության ակնարկ

Գիտության զարգացումը մեզ լավ հնարավորություն է տալիս հասկանալու, թե ինչպես է տեղի ունենում սովորելու գործընթացը: Դիտարկենք այն: Երբ արտաքին աշխարհից տեղեկատվություն ենք ստանում, այն սկզբում առնչվում է մեր կարճաժամկետ կամ աշխատանքային հիշողությանը: Որպեսզի կարողանանք արտաքին աշխարհից տեղեկություն ստանալ, մեզ պետք է ուշադրության կենտրոնացում: Ուշադրությունը կարևոր է ոչ միայն ուսուցման համար, այլև այսօր համարվում է մարդու կյանքի կարևորագույն ռեսուրսը: Եթե կարողանաք աշակերտի ուշադրությունը գրավել, ապա կկարողանանք ներգրավել ամբողջովին դասապրոցեսի մեջ: Ժամանակակից կրթության մեծագույն խնդիրներից մեկն այն է, որ աշակերտների ուշադրությունը գրավված է տարբեր բիզնես ինդուստրիաների, գործունեության տեսակների կողմից: ¹Որպեսզի սովորելու գործընթացը հնարավոր լինի, կրթության համակարգը պետք է փորձի գրավել աշակերտների ուշադրությունը



Այսպիսով՝ սովորելը հնարավոր դարձնելու առաջին քայլը ուշադրության կենտրոնացումն է: Երբ աշակերտը փոր խմբով աշխատելիս կենտրոնացնում է ուշադրությունը, ուսուցանվող նյութը տեղափոխվում է աշխատանքային կամ

¹Խաչատրյան Ս. (2020)«Ռ-սուցման արդյունավետ հնարներ. >>ԻՆՉՊԵՍ Է ՄԱՐԴԸ ՍՈՎՈՐՈՒՄ

կարճաժամկետ հիշողության մեջ: Մարդու կարճաժամկետ հիշողության հնարավորությունները սահմանափակ են, այսինքն՝ մարդը չի կարող միանգամից շատ բան սովորել: Ըստ գիտնականների՝ մարդը կարող է միանգամից սովորել 4-5 նոր բան: Ֆիզիկաի դասագրքերում, դասերի ժամանակ հաճախ ականատես ենք լինում իրավիճակների, երբ կարճ ժամանակում աշակերտներին փոխանցվում են մի քանի տասնյակ նոր անուններ, տերմիններ ու հասկացություններ: Իսկ ի՞նչ կարելի է անել, որ աշակերտները փոքր խմբով աշխատելիս հնարավորինս շատ բան սովորեն: Նախ և առաջ ուսուցիչը նոր դասը հանձնարարում է աշակերտի ունեցած նախնական գիտելիքի հիման վրա: Խնդիրն այն է, որ գիտելիք ունեցողը հաճախ չի պատկերացնում, թե ինչ է տեղի ունենում նոր դասը դեռևս չիմացող աշակերտի հետ: Ի՞նչ է հասկանում, ի՞նչ չի հասկանում, ի՞նչն է դժվարությամբ տրվում: Պատահական չէ, որ հաճախ ուսուցիչները զարմանում են, թե ինչու աշակերտները հասարակ բաները չեն հասկանում: Իրականում այդ ամենը հասարակ է թվում իմացողի տեսանկյունից: Իսկ դեռևս չիմացողի տեսանկյունից կարող է այլ կերպ լինել: Հետևաբար՝ շատ կարևոր է աշակերտներին նոր բաներ սովորեցնելիս մանրամասնել և անդրադառնալ՝ ինչո՞ւ է այդպես, ինչի՞ց է բխում այդ հետևությունը, որո՞նք են խնդրի բաղկացուցիչները և նմանատիպ այլ հարցերը: Շատ կարևոր է, որ աշակերտներին առաջադրանքներ տալիս տրվեն այնպիսի օրինակներ, որոնցում հարցի պատասխանի մի մասը կա կամ ներառված են խնդրի լուծման որոշ քայլեր: Մա աշակերտներին քայլ առ քայլ սովորելու հնարավորություն է տալիս: Փոքր խմբով աշխատելիս դասը լիարժեք է ստացվում, երբ իրականացնում ես պատկերի, դիտակտիկ նյութեր և տեքստի համադրում: Մենք ապրում ենք մի ժամանակում, երբ պատկերներ ստեղծելու հնարավորությունները մեծացել են: Արդյունքում սովորողները ավելի լավ են յուրացնում այն ամենը, ինչը ուղեկցվում է պատկերներով: Դրանք կարող են լինել նկարներ, լուսանկարներ, գծագրեր, գծապատկերներ: Հետևաբար՝ սովորողների կրթական կարիքների բացահայտման և դրան համապատասխան ուսուցման գործընթացում շատ մեծ դեր ունի այն հանգամանքը, թե որքանով են աշակերտները տեղյակ իրենց իմացածից ու չիմացածից: Սովորողները լավ են սովորում, երբ տրված հանձնարարությունները մատչելի են և ոչ թե շատ դճվար: ²ՌԻսումնական գործունեության պրոցեսը ենթարկվում է մի շարք ընդհանուր օրինաչափությունների: Ամենից առաջ անհրաժեշտ է, որպեսզի ուսուցիչը սխտեմատիկորեն երեխամերին ներգրավի ուսումնական իրադրությունների մեջ, նրանց հետ միասին գտնի ու ցուցադրի համապատասխան ուսումնական, վերահսկման ու գնահատման գործողությունները: Իսկ երեխաները, իրենց հերթին, պետք է գիտակցեն ուսումնական իրադրությունների իմաստը և հետևողականորեն վերարտադրեն բոլոր գործողությունները:

² Պետրովսկի Ա.Վ. Թարգմանիչ Նալչաջյան Ա.(1977)<<Տարիքային և մանկավարժական հոգեբանություն>> ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Ուսուցչին կարող է թվալ, որ ուսումնական նյութի հետ երեխաներին ծանոթացնելու հետ ձգված ու ծավալուն եղանակը ավելնորդ է: Բայց իրականում դա այդպես չէ: Հենց ուսումնական իրադրության նախադրյալների և նրա դերի այդպիսի բացահայտումն է երեխաների իմացական ակտիվության, ուսման նկատմամբ նրանց հետաքրքրության զարգացման ամենաէական պայմաններից մեկը:

³Սովորողների կրթական կարիքների բացահայտման և դրան համապատասխան ուսուցման գործընթացի կազմակերպման առանձնահատկ ձևերից է՝ փոքր խմբով ուսուցումը, չնայած երբեմն դասի տեսակից կախված լինում են նաև դժվարություններ: Փոքր խմբով աշխատանքը ուսուցման կազմակերպման ձև է, որը սովորողներին հնարավորություն է տալիս իրենց գիտելիքներն ու փորձը դասընկերների հետ փոխանակել, համատեղ խնդիրներ լուծել: Աշակերտն ավելի լավ է սովորում, երբ ակտիվ մասնակցում է ուսուցման գործնթացին:

Փոքր խմբերով ուսուցումն ունի հետևյալ նպատակներն:

- Չարգացնում է տարբեր բնույթի խնդիրներ լուծելու կարողություն.
- Ձևավորում է հաղորդակցման հմտություն
- Աշակերտները սովորում են միմյացից
- Չարգացնում է աշակերտների պատասխանատվության զարգացումը, միմյանց հաշվետու լինելու հատկությունը՝ խմբի ընդհանուր հաջողությունն ապահովելու հարցում,
- Խթանում է թիմային աշխատանքը
- Ապահով և նպաստավոր միջավայր է ստեղծում գիտելիքներն ու հմտությունները դրսևելու համար
- Քննարկումների միջոցով ապահովում է աշակերտների համոզմունքը
- Ընձեռում է ակտիվ մասնակցություն և ինքնադրսևորման հնարավորություն:

Նպատակին հասնելու համար պետք է հաղթահարեն մի շարք դժվարություններ: Խումբը պետք է փորձի ընդհանրություններ գտնի տեսակետների միջև, կարողանան ճիշտ հասկանան տրված առաջադրանքը, աշխատեն խմբի բոլոր անդամները:

³ Գյուլազյան Վ. (2009) <<Ուսուցչի ուղեցույց տեսք, օրվա դասի պլան>> ՓՈՔԸ ԽՄԲՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ և ՆՊԱՏԱԿԸ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍ

Հետազոտական աշխատանքի իրականացման համար որպես թիրախային խումբ ընտրվել է հիմնական դպրոցի <Ֆիզիկա> առարկայի դասաժամը: Ֆիզիկայի ուսուցման- ուսուցանման նպատակներն են, որ աշակերտի մոտ`

- առաջանա հետաքրքրություն ֆիզիկական երևույթները ուսումնասիրելու նկատմամբ,
- կարողանա աշխարհում ընթացող երևույթների մեջ տեսնել օրինաչափություններ և ստացած գիտելիքը կիրառել տարբեր կենսական հիմնախնդիրները լուծելու ժամանակ,
- կարողանա կապել միմյանց հետ միջավայրում ընթացող ֆիզիկական պրոցեսները,
- զարգանա հետազոտելու ունակություն-հմտություններ, որը կկիրառի նոր գիտելիք ձեռք բերելու ժամանակ,
- ֆիզիկական երևույթների վերլուծության հիման վրա, կարողանա բնության մեջ ընթացող տարբեր երևույթների կանխատեսում:

Աշակերտների մոտիվացիայի բարձրացման և թեմայի լիակատար յուրացման համար ընտրվել է փոքր խմբերով ուսուցման եղանակը, քանի-որ ուսուցման այս եղանակը նպաստում է աշակերտների գիտելիքների մոբիլիզացմանը, ստեղծգործ մտքի, բանավոր խոսքի, հիշողության, ուշադրության, անկախ մտածելակերպի, համբերության, հանդուրժողականության, զարգացմանը` ինչը դրական ազդեցություն ունի ոչ միայն տվյալ առարկայի պարագայում, այլև ընդհանուր զարգացման գործում: Դասապրոցեսի ուսուցումը իրականացրել էմ ի պատասխան ունակություններին, այդ իսկ պատճառով դասարանի մակարդակում այն իրականացրել էմ է ի պատասխան կազմակերպչական ռազմավարություններին առավելապես խմբերի բաժամելու տեսքով: Այս մոտեցման հիմքում ընկած է ունակությունների գաղափարը, այսինքն աշակերտները մինևույն առաջադիմությունը դրսևորում են կրթակարգի բոլոր դասընթացների դեպքում: Հասանելի դարձնել յուրաքանչյուր դաս բոլոր սովորողների համար` ընդունելով, որ ցանկացած աշակերտ ունակ է առաջադիմելու, և հնարավորություն տալ յուրաքանչյուրին առաջադիմելու իր ներուժի չափով: Մակայն⁴ խմբային աշխատանքների ժամանակ որոշ աշակերտներ «գլուխ են պահում»: Արտաքուստ թվում է, թե երեխաներն ակտիվ են, բայց վերջում պարզվում է, որ մնացորդային

⁴ Խաչատրյան Ս, (2020)<< Ուսուցման արդյունավետ հնարներ>> ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ ԵՎ ՀՆԱՐՆԵՐ

գիտելիքների մակարդակը ցածր է: Հետևաբար՝ նոր մանկավարժության մեջ չպետք է լինեն մեթոդների և հնարների հակադրում: Բոլոր մեթոդներն ու հնարները ինչ-որ իրավիճակում կարող են օգտակար լինել: Ուսուցման մեթոդները հաճախ ընկալվում են որպես դեղատոմս: Երբեմն նշվում է, որ այս կամ այն մեթոդը կիրառելու դեպքում մենք կկարողանանք հասնել մեր նպատակին: Բայց մանկավարժության մեջ ընդհանրացված լուծումներ չկան: Յուրաքանչյուր դաս, յուրաքանչյուր դասարան տարբեր է: Մեկ դասարանում աշխատող մոտեցումը կարող է մի այլ դասարանում չաշխատել: Հետևաբար՝ ուսուցման մեթոդներն ու հնարները պետք է ընկալել որպես գործիքներ, որոնց կիրառման մասին որոշումը կայացնում է ուսուցիչը: Հետազոտություն կատարվող 11-րդ դասարանում սովորում էին 15 աշակերտ: Իմ նախաձեռնությամբ կազմվել էր հենակետային տարասեռ փոքր խմբեր, համամասնորեն ընդգրկվելով ուսումնառության արդյունավետության տարբեր արդյունքներ ունեցող աշակերտներ՝ աղջիկներ և տղաներ: Ստեղծված խմբերի քանակը երեքն էին: Մեղաններն ու աթոռները դասավորվել էի այնպես, որ հնարավոր լինի իրականացնել համագործակցային աշխատանք և բոլորի համար տեսանելի լինի էկրանը: Նախօրոք սեղաններին դրվլ էր խմբերի անունները, տետր և գրիչներ, սեղաններին դրվել էր նաև խմբային աշխատանքների պատասխանները գրանցելու համար նախատեսված ձևաթղթերը: Խմբային աշխատանքների թեմաները բաժանելով խմբերի միջև ստեղծել էինք աշխատանքային միջավայր, որոնք գաղափարների փոխանակման հաջորդիվ հնարավոր կլինեք զարգացնել ելնելով տվյալ թեմայի բովանդակությունից և սահմանված մակարդակից : Խմբի անդամների միջև կատարվել էր դերերի բաշխում, մշակվել Bloom-ի տաքսոնոմիայի տարբեր մակարդակի մտածական հմտություններ, զարգացնող դասարանային խմբային առաջադրանքներ: Խմբերին տրվել էր նույնատիպ առաջադրանքներ: Ցանկացած հաջուրդող առաջադրանք պետք է լինեք նպատակային և գրավիչ, որպեսզի խթանք աշխատանքի արագ ավարտը: Աշակերտները աշխատում էին նույն առաջադրանքի վրա, սակայն առաջադրանքները բաց էին և տարբեր արդյունքների հնարավորություն էր տալիս: Հաղորդիչների հաջորդաբար և զուգահեռ միացումների գծագրերի և սեղաններն դրված՝ ամպերմետրերի, վոլտմետրերի , հաղորդալարերի, լամպերի նաև տեսանյութի⁵ օնությամբ պետք է հավաքեին հաղորդիչների հաջորդական և զուգահեռ միացումներ: Երեք խմբերն էլ հանձնարարությունը ավարտել էին տարբեր ժամանակահատվածում: Կահն շղթաները կառուցելու որոշ թերություննե, որոնք շտկվել էին: Ինչպես ֆիզիկաի շատ դասեր՝ այս հետազոտվող դասը ևս բացառություն չէր ,որ խմբային աշխանքը ունի առավելություններ, ինչո չէ նաև թերություններ: Մեր օրինակով ուժեղ աշկերտը փոձում էր թույլ աշակերտին

⁵ C:\Users\PC\Documents\lessons\

ներգրավեր աշխատանքի մեջ,բայց կաին նաև թերություններ՝ հակասությունների պատճառով վիճում էին և աղմկում:

Իմ կողմից հանձնարարված երկրորդ առաջադրանքը այն էր, որ յուրաքանչյուր խումբ պետք է շղթաները միացնեին հոսանքի աղբյուրին և տեսնեին լամպերի վառվելը:Համոզվել էին ,որ հաջորդաբար միացման ժամանակ, երբ մի լամպը թուլացնում էին մնացածները անջատվում էին: Զուգահեռ միացման ժամանակ մեկը թուլացնելիս մնացած լամպերը շարունակում էին վառվել:Խմբերում նկատվում էր մեծ ակտիվություն, սկսել էին իրար օգնել, բայց կաին թերություններ,որ չնայած իմ զգուշացումներին երբեմն անզգուշ էին շղթան միացնելու ժամանակ, քանի որ շղթայում կաին բաց մասեր: Պետք է շղթան անջատեին նոր լամպը թուլացնեին:Խմբերում կաին աշակերտներ ովքեր ծույլ էին և գրեթե ոչինչ չէի անում:

Երրորդ առաջադրանքը պետք է փորձի միջոցով համոզվեին ,որ հաջորդաբար միացման ժամանակ $I=I_1=I_2$,իսկ զուգահեռ միացման ժամանակ $U=U_1=U_2$:Խմբերը աշխատում էին մեծ պատասխանատվությամբ:Խմբային աշխատանքը ավարվելուց հետո աշակերտները հստակ գիտեին ,որ շղթաներին վոլտմետրը միացնում են զուգահեռ ,իսկ ամպերմետրը հաջորդաբար: Երեխաների ակտիվ մասնակցությունից և հաջորդ ժամանակի իրեց կայուն գիտելիքների արդյունքում հասկացա ,թե ինչքան արդյունավետ էր դասը խմբային այս մեթոդով աշխատելիս:

Նույն թեման գրեթե նույն մոեցմամբ իրականացրվ էի 9-րդ դարանի աշակերտների հետ:Այս դասարանում, քանի որ աշակերտների քանակը 28-ն էին, խմբերի քանակը վեցն էին՝ երեխաները ակտիվացել էին, փորձերը սկսեցի ինքս կատարել,իսկ խմբերին տալիս էի հարցեր և առաջարկներ: Այս դասարանում էլ թեման յուրացնելու համար աշակերտները օգտվել էին համացանցից, սակայն բարձր առաջադիմություն ունեցողները մշակել էին զեկույց ,որտեղ պահանջվում է համադրել և գնահատել սեփական բացահայտումները, իսկ ոչ այնքան բարձր առաջադիմություն ունեցող աշակերտները հետևել էին սահմանված ուղենիշներին և գտնում էին կոնկրետ հարցերի պատասխանները: Չնայած խմբերը ակտիվ մասնակցում էին , բայց հաջորդ դասերին պարզ դարձավ,որ թեման ոչ բոլորն էին յուրացրել:Երկու դասարանների աշխատանքների տարբերությունները միայն այն էր,որ 11-ր դասարանում խմբերն էին կատարել փորձերը,իսկ9-րդ դասարանում ինքս էի ցուադրել: Իմ փորձից կարող եմ ասել ,որ խմբային աշխատանքը ժամանակակից կազմակերպելու համար կարևոր է արդյունքների մանրակրկիտ հատկորոշումը, կանխորոշումը, նախագծումը և պլանաորումը: Աշխատանքում յուրաքանչյուր դաս ուղղված լինի սովորողների ուսուցման, դաստիարակության և զարգացման նպատակների իրագործմանը: Իմ Նպատակն է <Ֆիզիկա> առարկայի դասաժամերի ժամանակ իմ և սովորողների ուսումնական համատեղ գործունեության նախապես պլանավորված արդյունքների իրականացում: Դասի նպատակները աշակերտների համար պետք է լինի հասկանալի և ընդունելի: Նպատակը՝ ընդանրացնեն,


ամրապնդեն, խորացնեն թեմաների վերաբերյալ ունեցած գիտելիքները: .
Ամրապնդեն փորձարարական հմտությունները և ունակությունները զարգացնեն մտածողությունը, համացանցից տեսանյութերը դիտելուց և փորձերը կատարելուց հետո տրամաբանական եզրակացություններ կատարեն :Աշակերտները վերջնարդյունքում կզարգացնեն ստեղծագործական հմտությունները, հարցերի միջուցով ուսումնասիրություններ կատարելու հմտությունը, կներկայացնեն նշված թեմաները միջառարկայական կապերն այլ առարկաների հետ զարգացնելով աշխարհայացքը ձևավորելով արժեքային համակարգը, կզարգացնեն մտքեր փոխոնակելու, խմբային ակտիվ աշխատանք ծնավորելու, նշված ժամանակահատվածում առաջադրանքը կատարելու խմբի աշխատանքային կանոնները պահպանելու կարողությունները և հմտությունները, փորձերը կատարելուց հետո տրամաբանական եզրակացություններ անելու կարողությունները, զարգացնելով համալիր բնագիտական մտածելակերպը, մտքի հստակություն բանավոր խոսքի մշակույթի զարգացում, մտածողությունը՝ վերլուծության, համեմատության և ընդհարացման միջոցով:
Ընթանալից համար նշեմ որ 9-րդ և 11-րդ դասարանի ֆիզիկա առարկա էլեկտրականության բաժնի հաղորդիչների հաջորդաբար և զուգահեռ միացություն թեման ուսումնասիրելիս հետազոտության խնդրից և նպատակից ելնելով խմբային առաջադրանքները պարզից բարդ էին : Այս համատեքստում կարևորում էի հատկապես միջին բարձր մակարդակի մտածական հմտությունների զարգացմանը ուղղված արդյունքները: Բայց քանի որ դասարանները տարբեր էին խմբային աշխատանքն էլ մի փոքր այլ՝ դարաններում ստացան ք տարբեր արդյունքներ: Կարծում եմ կախված դասարանի առաջադիմությունից, ընտրված մեթոդից, մատուցման ձևից միշտ չէ , որ խմբային աշխատանքը տալիս է իր սպասված արդյունքը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Տվյալների վերլուծությունը կատարվել է աշակերտներին տրված համապատասխան առաջադրանքների արդյունքների հիման վրա, որոնք արտացոլում են սովորողների գիտելիքների մակարդակը: Փոքր խումբ դասերը իր ձևաչափի մեջ ունի և առավելություններ և դժվարություններ և տարբերվում է նրանով, որ նախկինում էլ էին դասին պատրաստված, սակայն խմբով աշխատելու եղանակը դասը ավելի հետաքրքրասեր, ժամանակակից, և ուսուցանող դարձրեց աշակերտների ստեղծագործական միտքը և երևակայությունը: Դասը կազմակերպվեց ավելի հազեցած և բովանդակալից: Աշակերտները հստակ ներկայացնում են տեսական հարցերը՝ մտքի հստակությամբ, բանավոր խոսքի հակիրճության մշակույթի զարգացումով, հստակ գտնում են տրամաբանական հարցերի պատասխանները՝ խմբերի համագործակցային եղանակով և պարզաբանելով տալիս են ճշգրիտ պատասխանը: Կարողանում են աշխատել իրենց արջև դրված գծագրերով և հավազել շղթաներ, փորձեր կատարել, որից հետո տալիս են տրամաբանական եզրակացություններ, կարողանում են ակտիվ ստեղծագործական մասնակցությամբ բացահայտել միջառարկայական և ներառարկայական կապերը և փոխոնակել մտքեր: Առաջադրանքը կատելիս 9-րդ դասարանը ընտրված մեթոդից կախված ունեցավ թերություններ: Կարողանում էին մտածողության զարգացումով վերլուծել և համեմատել: Աշակերտները ըմբռնելով իրենց կատարած գործողությունները՝ կատարել են ինքնագնահատում: Իմ կողմից գնահատվել է կատարած նախնական, միջանկյալ և վերջնական առաջադրանքները: Գնահատման վերջնական արդյունքները իրականացվել են աշակերտների ինքնագնահատման և իմ կողմից գնահատված արդյունքների համարժեքությամբ: Օգտվել եմ գնահատման 1-10 միավորանոց գնահատման սանդղակից:

Փոքր խմբով ուսուցման բովանդակության յուրացման գործընթացում յուրաքանչյուր աշակերտի համար ապահովվեց պայմաններ՝ աշակերտի ընդունակությունների, հետաքրքրությունների, հակումների, ճանաչողական պահանջմունքների բավարարման ու մաքսիմալ զարգացման համար: Փոքր խմբով աշխատելու մեթոդը ինձ հնարավորություն ընձեռեց ուսումնական պրոցեսը կազմակերպել՝ հաշվի առնելով անձի անհատական առանձնահատկությունները և ապահովեց նյութի հեշտ յուրացումը՝ համապատասխանեցնելով երեխաների ճանաչողական պահանջմունքներին և անհատական առանձնահատկություններին: Հիմնվելով թերությունների վրա հետագայում դասարաններում գրանցվեց առաջադիմության աճ և ակտիվ մրցակցություն: Աշակերտների մեջ ստեղծված մրցակցությունը հիմնականում

առաջ մղեց աշակերտներին, արդյունքում բարձրացավ ուսումնա՝ նկատմամբ հետաքրքրությունը: Բոլորը հավասար են այստեղ, բոլորը զբաղված են, բոլորն են պատկերացնում դասապրոցեսում իրականացվող դասի բովանդակությունը: Ուսումնառության ընթացքում մեթոդի կիրառման արդյունքում դասարանի պասիվ աշակերտների մոտ գրանցվեց ուշադրության աճ և ակտիվ մասնակցություն, ավելի հետաքրքիր և մասնակից դարձրեց աշակերտներին, ինչը ավանդական ուսուցման մեթոդով չէր հաջողվում: Դիտարկելով երկու տարբեր դասարանների գրեթե նույն խմբային աշխատանքը պարզ դարձավ ,որ միևնույն մեթոդը չի տալիս միևնույն արդյունքը :Եթե համեմատեն աշխատանքը նախկինում անցկացված ավանդական մեթոդով ,որը նշել եմ կապույտ գույնով ,դասերը խմբային մեթոդով ,որը նշել եմ կարմիր գույնով ստացելեմ հետևյալ տեսքը :



Գրականության ցանկ

¹Խաչատրյան Ս. (2020)«Ուսուցման արդյունավետ հնարներ. >> *ԻՆՉՊԵՍ Է ՄԱՐԴԸ ՍՈՎՈՐՈՒՄ*

¹ Պետրովսկի Ա.Վ. թարգմանիչ Նալչաջյան Ա.(1977)«Տարիքային և մանկավարժական հոգեբանություն»> *ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ*

¹ Գյուլազյան Վ. (2009) «Ուսուցչի ուղեցույց տետր, օրվա դասի պլան»> *ՓՈՔԸ ԽՄԲՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ և ՆՊԱՏԱԿԸ*

¹ C:\Users\PC\Documents\lessons\

¹ Խաչատրյան Ս, (2020)« Ուսուցման արդյունավետ հնարներ»> *ՈՒՍՈՒՅՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ ԵՎ ՀՆԱՐՆԵՐ*